ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Սարդարապատ համայնք,
ՀՀ Արմավիրի մարզ, գ. Սարդարապատ, Հեռ. (098) 252500, sardarapat.armavir@mta.gov.am

,,05,,02 2020թ

Թիվ 32

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Մեծարգո մարզպետ

Ձեզ ենք, ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Սարդարապատ համայնքի ղեկավարի 2019 թվականի տարեկան հաշվետությունը:

Առդիր չորս թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Գ.ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Գ.Սարդարապատ 04 փետրվար 2020 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԴԱՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Սարդարապատ համայնքի ղեկավարի 2019 թվականի տարեկան հաշվետվությունը տեղի ունեցավ 2020 թվականի փետրվարի 4-ին՝ Արմավիրի մարզի Սարդարապատի համայնքապետարանի դահլիճում : Համայնքի ղեկավարի հաշվետվությանը մասնակցում էին՝ Արմավիրի մարզի մարզպետի տեղակալ՝ Կարեն Գրիգորյանը, համայնքի բնակիչներ և Սարդարապատ համայնքի ավագանու անդամները :

Հարգելի ներկաներ՝ 2019 թվականը անցել է հանգիստ պայմաններում: Ինչպես անցած տարիներին ազգաբնակչությունը վաղ գարնանից ձեռնամուխ է եղել՝ գարնանացանի, սածիլացման, այգիների բացման , էտի և մյուս նախապատրաստական աշխատանքներին: Հանրապետությունում տեղի ունեցած հայտնի դեպքերը լայն հնարավորություն են ստեղծել համայնքում դեռևս չլուծված խնդիրները իրականացնելու համար: Մասնավորապես 2019 թվականի համայնքի ավագանին հավանության էր տվել և հաստատել էր համայնքի տարեկան աշխատանքների պլանը , որը իրենից ներկայացնում էր մասնավորապես՝

ա) Համայնքի խմեու ջրի ներքին ցանցի հիմնավերանորոգումը:

բ) Մանկապարտեզի շենքի մասնակի վերանորոգումը:

գ) Համայնքի փողոցների ցերեկային լուսավորություն անցկացնելու շարունակական աշխատանքները:

դ) Համայնքի դպրոցի մարզադաշտի տարածքի մաքրման, որոշակի գույքի ձեռք բերման աշխատանքները:

ե)Դաշտամիջյան ճանապարհների հարթեցման և բարեկարգման աշխատանքներ:

Մեզ Սարդարապատցիներիս, քաջ հայտնի է, որ մեր համայնքում թիվ մեկ խնդիրը եղել և մնում է խմելաջրի ներքին ցանցի և ենթակառուցվածքների հիմնանորոգումը:
2019 թվականին մասնակցել ենք Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից կազմակերպված հանրապետության մարզերի զարգացման սուբսիդավորման ծրագրերին՝ ծրագրի շրջանակներում համայնքում անցկացվել է 3850 գմ ջրագիծ, որի ներդրումը համայնքի և պետության կողմից կազմել է 19.554.830 ՀՀ դրամ :
Գիտակցելով մանկապարտեզի դերն ու նշանակությունը համայնքի ընդհանուր գործունեության մեջ համայնքապետարանը համայնքի միջոցների հաշվին մանկապարտեզում կատարվել է մասնակի վերանորոգման աշխատանքներ իրականացվեց մանկապարտեզի մասնաշենքում՝ երեք սանհանգույցների վերանորոգում, ստեղծելով բավարար սանիտարական պայմաններ մանկապարտեզը վերաբացելու համար: Եվ մայիս ամսից մանկապարտեզը վերաբացվեց, ուր հաճախում է ավելի քան 100 երեխա, ինչպես մեր համայնքից այնպես էլ հարևան համայնքներից: Այս տարի նախատեսել ենք մանկապարտեզի շենքի ամրացման աշխատանքների նախահաշվի ձեռքբերումը և բուն շինարարական աշխատանքները ավարտին հասցնելը կլինի հաջորդ տարի:
Շարունակական աշխատանքներ են տարվում համայնքի փողոցները լուսավորելու համար և 2019 թվականի դրությամբ լուսավորվել է համայնքի փողոցների շուրջ 90%-ը:
Գարնանից կազմակերպեցինք համայնքի դպրոցի մարզադաշտի տարածքի մաքրման , հողերի տեղափոխման որոշակի աշխատանքներ: Համայնքապետարանի ֆինանսավորմամբ ձեռք է բերվել որոշակի սպորտային գույք , որը շարունակական բնույթ է կրում: Ներկա պահին գործում է ֆուտբոլի երկու մանկական խմբակներ , արդեն իսկ ունենք որոշակի հաջողություններ՝ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի մասայական զարգացման մրցաշարում մեր երեխաները զբաղեցրել են պատվավոր 2-րդ տեղը:
Մրցաշարը կազմակերպվել էր Էջմիածին քաղաքում , ինչպես երեխաների տեղափոխումը այնպես էլ մասնակցության ֆինանսավորումը կատարվել է համայնքի հաշվեկշռից: Նշված բոլոր առաջնահերթություն համարվող ծրագրերը ներկայացվել են համայնքի ավագանու քննարկմանը, հավանություն ստանալուց հետո կազմակերպվել են հանրային լսումներ և որից հետո նոր միայն իրականացվել է աշխատանքները :
Ի ուրախություն մեր ազգաբնակչության և շրջակա համայնքերի ազգաբնակչության հունիս ամսից սկսվել և նոյեմբեր ամսին շահագործման է հանձնվել Սարդարապատ-
Նոր Արմավիր միջհամայնքային ճանապարհը,որի աշխատանքները կատարվել են բարձր

որակով և մեր կողմից տրամադրվել է ցանկացած օգնություն՝ աշխատանքների ընթացքում առաջացած խնդիրների լուծման հետ կապված:

Անցած տարվա ընթացքում ազգաբնակչությանը անխափան մատակարարվել է խմելու ջուր՝ ըստ հաստատված գրաֆիկի: Ժամանակին վերացվել են ներքին ցանցի խափանումները և վթարները, իրականացվել է ազգաբնակչության կողմից կատված կենցաղային աղբի անվճար տեղափոխությունը:

Կատարվել է գյուղամիջյան և դաշտամիջյան ճանապարհների հարթեցման և բարեկարգման աշխատանքներ, որնցից երկուսը վատ վիճակում էին գրեթե անանցանելի , երկու դաշտամիջյան ճանապարհներ ամբողջովին ավազապատվել և հարթեցվել են : Ինչպես անցած տարիներին այնպես էլ այս տարի համայնքի ֆինանսավորմամբ գյուղում գործում է դպրոցական ավտոբուս , որը ըստ հաստատված գրաֆիկի գյուղի ծայրամասից առավոտյան աշակերտներին տեղափոխում է դպրոց և դասերը ավարտվելուց հետո տեղափոխում է տուն: Համայնքապետարանը կազմակերպել և մասնակցել է ՀՀ կառավարության կողմից կազմակերպված երեք շաբաթօրյակի: 2019 թվականին համայնքում տեղադրվել է Արցախում հերոսաբար զոհված մեր երկու համագյուղացիների հուշաքարերը:

Հարգելի ներկաներ, պարոն փոխմարզպետ, ընթացիկ տարին գյուղատնտեսության համար սկսվեց ոչ բարենպաստ պայմաններում՝նախ վաղ գարնան ցրտահարությունը, որը որոշակի վնաս հասցրեց հատկապես խաղողի և պտղատու այգիներին և հունիսի կարկտահարությանը որոշակի տարածքների վրա, էական վնաս է հասցրել նաև ֆերմերներին: Այդ կապակցությամբ համայնքում ստեղծվել է հանձնաժողով, տեղում մարզպետարանի ներկայացուցչի հետ ուսումնասիրվել է հասված վնասի չափը և համապատասխան ձևով կազմված ակտը ներկայացվել է Արմավիրի մարզպետարան ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելու համար, սակայն ընդհանուր առմամբ տարին բարենպաստ էր գյուղատնտեսության համար:

Հաշվետու տարում հրավիրվել և անցկացվել է ավագանու վեց նիստ, որում կայացվել է տարաբնույթ 37 որոշումներ, կայացվել է համայնքի ղեկավարի 76 որոշում և 22 կարգադրություն:

1672 բնակիչ է դիմել համայնքապետարան, և ստացել են գրավոր պատասխաններ , ավելի քան 1320 բնակիչ տրվել է բանավոր խորհրդատվություն և պարզաբանումներ:

Կապը համայնքապետարանի և ազգաբնակչության միջև եղել և մնում է մշտական առանց հանգստյան օրերի, կարելի է ասել, 24 ժամյա գրաֆիկով:

Հաշվետու ժամանակահատվածում համայնքում ծնվել է 64 երեխա, զորոցրվել 17 զինծառայող, ավանդույթի համաձայն և ծնված երեխաներին և բանակից վերադարձածներին համայնքի բյուջեից միանվագ հատկացվում է 50000/ հիսուն հազար/ ՀՀ դրամ , որոնք միասին 2019 թվականի համար կազմել են 4.050.000 ՀՀ դրամ գումար որպես պարգևավճար: Համայնքի ավագանու որոշումներով տրամադրվել է 4.454.000 ՀՀ դրամ սոցօգնություն, և հատկացվել համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին, 310.000 ՀՀ դրամ փոխանցվել է երկու անապահով ընտանիքների՝ որպես երեխաների ուսման վարձ : Համայնքը ապահովված է ոռոգման ջրով եղել են որոշակի խնդիրներ ծայրամասի հողատարածքները ոռոգման ջուր մատակարարելու հետ կապված,սակայն այդ հարցը մշտապես գտնվում է մեր ուշադրության ներքո,որը համայնքապետարանի և <<Արմավիր>> ՋՕԸ- և աշխատակիցների հետ համատեղ լուծվել է, ոռոգման համակարգին են միացվել նաև խմելու ջրի խորքային պոմպերը : Համայնքում գյուղատնտեսական մթերքների արտադրությունը արդյունքները 2019 թվականին գնահատվել է՝ լավ : 2019 թվականին համայնքում և՛ քանակի, և՛ որակի գծով ունեցել ենք արևածաղիկի աննախադեպ բերք, և մեր կողմից անհրաժեշտ է որոշակի քայլեր կատարել արևածաղիկի բերքահավաքի , չորացման և զտման աշխատանքները առանց բարդացումների անցկացնելու համար: Խաղողի մթերումը համեմատած նախորդ տարիներին մթերողների կողմից կազմակերպվել է շատ լավ և 10 դրամով բարձրացել է տեխնիկական տեսակի խաղողի գինը: 2019 թվականին համայնքում հիմնվել է 12.60 հա խաղողի այգի և 25.0 հա պտղատու այգի:

2019 թվականին ունեցել ենք սեփական եկամուտների աճ՝ ընդհանուր հավաքագրումը կազմել է 105.5 %:

2019 թվականը Սարդարապատ համայնքի համար եղել է բարենպաստ՝ քաղաքական իրավիճակը կայուն է , ազգաբնակչությունը հանգիստ է :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Գ.ՄԽԻԹԱՐՅԱՆ